

առժամեայ դպրոցի մը: Աւելորդ չ'ըլլար հոս յիշելը, թէ այդ առժամեան տասը տարիէն աւելի է, որ կ'ապրէր:

Սրճարանին առջեւ բազմութիւն: Օրը՝ լուռ: Ոչ ամսավերջ, ոչ տաղաւարի հով:

Գիշերը: Կը ճանչնամ շատ լաւ եօթը փորձանք այդ գազանը: Կանչուած եմ, անշուշտ սրճարան: Տղաքը ինձմէ աւելի կը հետաքրքրուին անոր երեւումովը, վասնզի վարժապետը կանչուած է: Կը դնեմ իմ ներկայացուցիչը տղոց գլխուն, կու տամ անհրաժեշտ հրահանգները՝ բոլորն ալ կարգապահական՝ քնացողներուն ցանկը կը պահանջեմ, որ բռնէ ամուր ու կը նետեմ մէջտեղ գաւազանը: Այս բոլորին վարժ են տղաքը, ամէնօրեայ կրկնումներու արդիւնք մը իբրեւ:

Գեղին վարժապետը մոլխթարին (գիւղապետ) եւ տէրտէրին մէջտեղը անհրաժեշտ մարդ մըն է: Անոր աւագ պաշտօնը ձայնաւորութիւնն է. այսինքն՝ եկեղեցիին մէջ երգելը, այդ արարողութիւնը տղոց սորվեցնելը: Գեղին նիւթական զարհուրելի վիճակը կ'արգիլէ զանոնք ուզուած մարդը ունենալէ, գինին երեսէն ու կը պարտադրէ գոհանալ պատահականով: Զիս կանխողն ալ ինծի պէս բաղաձայն վարժապետ մըն էր: Տէրտէրը ազգասիրաբար կ'երգէ վարժապետին ալ բաժինը ու տղաքը ժամուն մէջ կը սորվին պատարագը: Իմ բաղաձայն ըլլալու դժբախտութիւնս ծանր չէ կշռած, մա՛նաւանդ՝ որ փոխարէնը կը ներկայացնեմ շատ-շատ առաւելութիւններ, բոլորն ալ առօրեայ կեանքին մէջ օգտագործելի: Վարժապետին երրորդական, չորրորդական զբաղումը՝ տղոց գիր ու հաշիւ սորվեցնելը: Կարեւորագոյնը՝ օրուան ընթացիկ աշխատանքն է, գեղի կեանքին հազար ու մէկ լուրջ կամ չնչին մանրամասնութեանցը նուիրուած: Ամէն օր մարդ կը մեռնի: Զայն թաղելը տէրտէրին պարտականութիւնն է անշուշտ: Բայց կառավարութեան տետրակներուն մէջ ալ լուսահոգի մերջնականապէս թաղելը՝ վարժապետին պարտքը: Առանց անձնական